

Կ-204<sup>4</sup>-21.06.2019-ՖՎ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի առաջին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «Ժդ» կետով.

«Ժդ) մաքսային մարմինների կողմից օրենքով սահմանված դեպքում մաքսային գործառնությունների իրականացման, մաքսային ուղեկցման, ապրանքների ժամանակավոր պահպանության, ինչպես նաև նախնական որոշումների տրամադրման համար:»:

**Հոդված 2.** Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 19.9-րդ հոդվածով.

«**Հոդված 19.9. Մաքսային մարմինների կողմից օրենքով սահմանված դեպքում մաքսային գործառնությունների իրականացման, մաքսային ուղեկցման, ապրանքների ժամանակավոր պահպանության, ինչպես նաև նախնական որոշումների տրամադրման համար պետական տուրքի դրույքաչափերը**

1. Մաքսային մարմինների կողմից օրենքով սահմանված դեպքում մաքսային գործառնությունների իրականացման, մաքսային ուղեկցման, ապրանքների ժամանակավոր պահպանության, ինչպես նաև նախնական որոշումների տրամադրման համար «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածով նախատեսված անձանցից պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝

1) Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների, ինչպես նաև բանկերի կողմից տեղափոխվող արժույթի և արտարժույթի մաքսային ձևակերպումների իրականացման (բացառությամբ ապրանքների զննման և

բազային տուրքի  
3.5-ապատիկի չափով

հաշվառման) համար

2) Ապրանքների զննման և հաշվառման համար,  
բացառությամբ խողովակաշարերով և էլեկտրահաղորդման  
գծերով տեղափոխվող ապրանքների համար`

ա. միևնույն մաքսային հայտարարագրով  
հայտարարագրված մինչև մեկ տոննա քաշ ունեցող  
ապրանքների մաքսային հսկողության համար

բազային տուրքի  
չափով

բ. միևնույն մաքսային հայտարարագրով  
հայտարարագրված մեկ տոննայից ավելի քաշ ունեցող  
ապրանքների յուրաքանչյուր լրացուցիչ (կամ ոչ լրիվ)  
տոննայի մաքսային հսկողության համար

բազային տուրքի 0.3-  
ապատիկի չափով

3) Խողովակաշարերով և էլեկտրահաղորդման գծերով մեկ  
ամսվա ընթացքում միևնույն պայմանագրի հիման վրա  
միևնույն ուղղությամբ տեղափոխվող ապրանքաքանակի  
մաքսային հսկողության համար

բազային տուրքի 500-  
ապատիկի չափով

4) Հայաստանի Հանրապետության տարածքով  
ապրանքների մաքսային ուղեկցման` յուրաքանչյուր հարյուր  
կիլոմետրի համար

բազային տուրքի 10-  
ապատիկի չափով

5) Մաքսային մարմինների կողմից ժամանակավոր  
պահպանության համար`

ա. օրական` մինչև մեկ տոննայի համար

բ. մեկ տոննայից ավելի յուրաքանչյուր լրացուցիչ (կամ ոչ  
լրիվ) տոննայի համար

բազային տուրքի  
չափով  
բազային տուրքի 0.3-  
ապատիկի չափով

6) Տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության համար`

ա. մինչև 10 նստատեղով մարդատար ավտոմեքենաներ

բ. այլ տրանսպորտային միջոցներ

բազային  
տուրքի 2-  
ապատիկի  
չափով  
բազային  
տուրքի 5-  
ապատիկի  
չափով

7) Մաքսային մարմնի կողմից Եվրասիական տնտեսական  
միության մաքսային օրենսգրքով և «Մաքսային կարգավորման  
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված  
կարգով ապրանքների դասակարգման, ներմուծվող ապրանքների  
մաքսային արժեքի որոշման մեթոդների և ապրանքների ծագման

բազային  
տուրքի  
30-ապատիկի  
չափով

երկրի վերաբերյալ յուրաքանչյուր նախնական որոշման համար

8) Մաքսային մարմնի կողմից «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում մի քանի խմբաքանակներով տեղափոխվող ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշման տրամադրման համար

բազային  
տուրքի 30-  
ապատիկի  
չափով

2. Մաքսային մարմինների սահմանած տեղերից և աշխատանքային ժամերից դուրս ապրանքների մաքսային ձևակերպումների կամ դրանց հետ կապված առանձին գործողությունների կատարման համար պետական տուրքը գանձվում է սույն հոդվածով սահմանված դրույքաչափերի կրկնապատիկի չափով»

3. Հատուկ պահպանման պայմաններ պահանջող ապրանքների ժամանակավոր պահպանության համար պետական տուրքը գանձվում է սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված դրույքաչափերի կրկնապատիկի չափով:»:

**Հոդված 3.** Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 28.2-րդ հոդվածով.

**«Հոդված 28.2. Մաքսային մարմինների կողմից օրենքով սահմանված դեպքում մաքսային գործառնությունների իրականացման, մաքսային ուղեկցման, ապրանքների ժամանակավոր պահպանության, ինչպես նաև նախնական որոշումների տրամադրման համար պետական տուրքի գծով արտոնությունները**

1. Սույն օրենքի 19.9-րդ հոդվածով սահմանված պետական տուրքից ազատվում են՝

1) Հայաստանի Հանրապետության տարածք մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի շրջանակներում ներմուծվող ապրանքները» Օրենսդրությամբ (այդ թվում՝ միջազգային պայմանագրերով) ուղղակիորեն նշված չլինելու դեպքում ծրագրի տարբերակումն ըստ բնույթի որակում է Վարչապետի ստեղծված՝ բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովը.

2) միջազգային կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցները՝ այդ փոխադրումների իրականացման ժամանակ.

3) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից մաքսատուրքի և հարկերի վճարումից ազատմամբ Հայաստանի Հանրապետության պետական սահմանով տեղափոխվող ապրանքները.

4) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխվող՝ Միության անդամ պետություններում հաշվառված թեթև մարդատար տրանսպորտային միջոցները.

5) ցուցադրման նպատակով «Ժամանակավոր արտահանում» կամ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգերով ձևակերպված, ինչպես նաև դրանց ժամկետի ավարտից հետո համապատասխանաբար «Վերաներմուծում» և «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգերով վերաձևակերպված՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով գրանցված կամ գրանցման ենթակա մշակութային արժեքները.

6) իրավաբանական անձանց կողմից մեկ փոխադրողից մեկ ստացողին մեկ տրանսպորտային փաստաթղթով Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխվող՝ ընդհանուր մաքսային արժեքը 200 եվրոյին համարժեք գումարը չգերազանցող գումարի չափով ապրանքները»

2. Սույն հոդվածով սահմանված արտոնություններից բացի այլ արտոնություններ կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

**Հոդված 4.** Օրենքի 32-րդ հոդվածում 10-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 11-րդ մասով.

«11. Սույն օրենքի 19.9-րդ հոդվածով սահմանված պետական տուրքը վճարվում է՝

ա) մաքսային ընթացակարգերի շրջանակներում, բացառությամբ «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի, ինչպես նաև ժամանակավոր պահպանության համար՝ մինչև ապրանքների բաց թողման պահը.

բ) «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի շրջանակներում՝ մինչև մաքսային տարանցման ավարտը.

գ) մաքսային ուղեկցման համար՝ մինչև մաքսային ուղեկցումը փաստացի սկսելը.

դ) նախնական որոշումների համար՝ մինչև մաքսային մարմինների կողմից նախնական որոշումների տրամադրումը:»:

**Հոդված 5.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երկրորդ ամսվա 1-ից:

**ՏԵՂԵԿԱՆՔ**  
**ՆԱԽԱԳԾԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՕՐԵՆՔԸ**

**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի առաջին ~~պարբերությունը~~ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «Ժդ» ~~ենթակետով կետով~~.

«Ժդ) մաքսային մարմինների կողմից օրենքով սահմանված դեպքում մաքսային գործառնությունների իրականացման, մաքսային ուղեկցման, ապրանքների ժամանակավոր պահպանության, ինչպես նաև նախնական որոշումների տրամադրման համար:»:

**Հոդված 2.** Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 19.7-րդ հոդվածով.

«**Հոդված 19.79.**—Մաքսային մարմինների կողմից օրենքով սահմանված դեպքում մաքսային գործառնությունների իրականացման, մաքսային ուղեկցման, ապրանքների ժամանակավոր պահպանության, ինչպես նաև նախնական որոշումների տրամադրման համար պետական տուրքի դրույքաչափերը

1. Մաքսային մարմինների կողմից օրենքով սահմանված դեպքում մաքսային գործառնությունների իրականացման, մաքսային ուղեկցման, ապրանքների ժամանակավոր պահպանության, ինչպես նաև նախնական որոշումների տրամադրման համար «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածով նախատեսված անձանցից պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝

1) Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների, ինչպես նաև բանկերի կողմից տեղափոխվող արժույթի և արտարժույթի մաքսային ձևակերպումների իրականացման (բացառությամբ ապրանքների զննման և հաշվառման) համար բազային տուրքի  
3.5-ապատիկի չափով

2) Ապրանքների զննման և հաշվառման համար, բացառությամբ խողովակաշարերով և էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների համար՝

<p>ա. միևնույն մաքսային հայտարարագրով հայտարարագրված մինչև մեկ տոննա քաշ ունեցող ապրանքների մաքսային հսկողության համար</p>	<p>բազային տուրքի չափով</p>
<p>բ. միևնույն մաքսային հայտարարագրով հայտարարագրված մեկ տոննայից ավելի քաշ ունեցող ապրանքների յուրաքանչյուր լրացուցիչ (կամ ոչ լրիվ) տոննայի մաքսային հսկողության համար</p>	<p>բազային տուրքի 0.3-ապատիկի չափով</p>
<p>3) Խողովակաշարերով և էլեկտրահաղորդման գծերով մեկ ամսվա ընթացքում միևնույն պայմանագրի հիման վրա միևնույն ուղղությամբ տեղափոխվող ապրանքաքանակի մաքսային հսկողության համար</p>	<p>բազային տուրքի 500-ապատիկի չափով</p>
<p>4) Հայաստանի Հանրապետության տարածքով ապրանքների մաքսային ուղեկցման՝ յուրաքանչյուր հարյուր կիլոմետրի համար</p>	<p>բազային տուրքի 10-ապատիկի չափով</p>
<p>5) Մաքսային մարմինների կողմից ժամանակավոր պահպանության համար՝</p>	<p>բազային տուրքի չափով</p>
<p>ա. օրական՝ մինչև մեկ տոննայի համար</p>	<p>բազային տուրքի 0.3-ապատիկի չափով</p>
<p>բ. մեկ տոննայից ավելի յուրաքանչյուր լրացուցիչ (կամ ոչ լրիվ) տոննայի համար</p>	<p>բազային տուրքի 0.3-ապատիկի չափով</p>
<p>6) Տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության համար՝ ա. մինչև 10 նստատեղով մարդատար ավտոմեքենաներ բ. այլ տրանսպորտային միջոցներ</p>	<p>բազային տուրքի 2-ապատիկի չափով բազային տուրքի 5-ապատիկի չափով</p>
<p>7) Մաքսային մարմնի կողմից Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքով և «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ապրանքների դասակարգման, ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի որոշման մեթոդների և ապրանքների ծագման երկրի վերաբերյալ յուրաքանչյուր նախնական որոշման համար</p>	<p>բազային տուրքի 30-ապատիկի չափով</p>
<p>8) Մաքսային մարմնի կողմից «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով</p>	<p>բազային տուրքի 30-ապատիկի</p>

չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված չափով կամ անավարտ վիճակում մի քանի խմբաքանակներով տեղափոխվող ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշման տրամադրման համար

2. Մաքսային մարմինների սահմանած տեղերից և աշխատանքային ժամերից դուրս ապրանքների մաքսային ձևակերպումների կամ դրանց հետ կապված առանձին գործողությունների կատարման համար պետական տուրքը գանձվում է սույն հոդվածով սահմանված դրույքաչափերի կրկնապատիկի չափով»

3. Հատուկ պահպանման պայմաններ պահանջող ապրանքների ժամանակավոր պահպանության համար պետական տուրքը գանձվում է սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված դրույքաչափերի կրկնապատիկի չափով:»:

**Հոդված 3.** Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 28.2-րդ հոդվածով.

«Հոդված 28.2. Մաքսային մարմինների կողմից օրենքով սահմանված դեպքում մաքսային գործառնությունների իրականացման, մաքսային ուղեկցման, ապրանքների ժամանակավոր պահպանության, ինչպես նաև նախնական որոշումների տրամադրման համար պետական տուրքի գծով արտոնությունները

1. Սույն օրենքի 19. 7 9-րդ հոդվածով սահմանված պետական տուրքից ազատվում են՝

1) Հայաստանի Հանրապետության տարածք մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի շրջանակներում ներմուծվող ապրանքները» Օրենսդրությամբ (այդ թվում՝ միջազգային պայմանագրերով) ուղղակիորեն նշված չլինելու դեպքում ծրագրի տարբերակումն ըստ բնույթի որակում է Վարչապետի ստեղծված՝ բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովը.

2) միջազգային կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցները՝ այդ փոխադրումների իրականացման ժամանակ.

3) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից մաքսատուրքի և հարկերի վճարումից ազատմամբ Հայաստանի Հանրապետության պետական սահմանով տեղափոխվող ապրանքները.

4) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխվող՝ Միության անդամ պետություններում հաշվառված թեթև մարդատար տրանսպորտային միջոցները.

5) ցուցադրման նպատակով «ժամանակավոր արտահանում» կամ «ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգերով ձևակերպված, ինչպես նաև դրանց ժամկետի ավարտից հետո համապատասխանաբար «Վերաներմուծում» և «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգերով վերաձևակերպված՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով գրանցված կամ գրանցման ենթակա մշակութային արժեքները.

6) իրավաբանական անձանց կողմից մեկ փոխադրողից մեկ ստացողին մեկ տրանսպորտային փաստաթղթով Հայաստանի Հանրապետության սահմանով

տեղափոխվող՝ ընդհանուր մաքսային արժեքը 200 եվրոյին համարժեք գումարը չգերազանցող գումարի չափով ապրանքները»

2. Սույն հոդվածով սահմանված արտոնություններից բացի այլ արտոնություններ կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

**Հոդված 4.** Օրենքի 32-րդ հոդվածում ~~1011~~-րդ ~~պարբերությունից~~ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր-~~պարբերություն~~ 11-րդ մասով.

«11.Սույն օրենքի 19. 97-րդ հոդվածով սահմանված պետական տուրքը վճարվում է՝

ա) մաքսային ընթացակարգերի շրջանակներում, բացառությամբ «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի, ինչպես նաև ժամանակավոր պահպանության համար՝ մինչև ապրանքների բաց թողնման պահը.

բ) «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի շրջանակներում՝ մինչև մաքսային տարանցման ավարտը.

գ) մաքսային ուղեկցման համար՝ մինչև մաքսային ուղեկցումը փաստացի սկսելը.

դ) նախնական որոշումների համար՝ մինչև մաքսային մարմինների կողմից նախնական որոշումների տրամադրումը:»:

**Հոդված 5.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երկրորդ ամսվա 1-ից:

## ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Պետական նյութական պահուստի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության

սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Կ-204-21.06.2019-Ֆվ-011/1) վերաբերյալ ստացված առաջարկների

Առարկության, առաջարկության հեղինակը	Նախագծի հոդված	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
<p><b>«Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ</b></p>				
<p>1. ՀՀ կառավարություն</p>	<p>Նախագծի 1-ին հոդված</p>	<p>Առաջարկում ենք «պարբերությունը» բառը փոխարինել «մասը» բառով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները և «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները:</p>	<p>Առաջարկն ընդունվել է:</p>	<p>Ընդունվել է:</p>
<p><b>Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ</b></p>				

2. ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք «111-ին» բառը փոխարինել «11.1-րդ» բառով՝ հաշվի առնելով «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները:	Առաջարկությունն ընդունվել է:	Ընդունվել է:
<b>«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ</b>				
3. ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք «պարբերությունը» բառը փոխարինել «մասը» բառով, իսկ «ենթակետով» բառը՝ «կետով» բառով՝ նկատի ունենալով «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:	Առաջարկությունն ընդունվել է:	Ընդունվել է:
4. ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Առաջարկում ենք 2-րդ հոդվածում «19.7» թիվը փոխարինել «19.9» թվով, քանի որ հիշյալ օրենքով 19.7-րդ հոդված արդեն իսկ նախատեսված է: Սույն դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջներից, մասնավորապես՝ նորմատիվ իրավական ակտի բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի, ենթակետերի կամ պարբերությունների միջև համապատասխանաբար նոր բաժին,	Առաջարկությունն ընդունվել է:	Ընդունվել է:

		գլուխ, հողված, մաս, կետ, ենթակետ կամ պարբերություն կարող է լրացվել միայն լրացուցիչ համարով: Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 3-րդ հողվածով լրացվող 28.2-րդ հողվածի 1-ին մասին և 4-րդ հողվածին:		
5. ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հողված	Առաջարկում ենք «պարբերությունից» և «նոր պարբերություն» բառերը փոխարինել «մասից» և «նոր 11-րդ մասով» բառերով՝ նկատի ունենալով «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հողվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հողվածի 3-րդ մասի պահանջները:	Առաջարկությունն ընդունվել է:	Ընդունվել է:
		Առաջարկում ենք «Սույն» բառից առաջ լրացնել «11» թիվը:	Առաջարկությունն ընդունվել է:	Ընդունվել է:
<b>«Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ</b>				
6. ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հողված	Առաջարկում ենք նախագծի 2-րդ հողվածում նախատեսված հիշյալ օրենքի վավերապայմանները նախատեսել նախագծի 1-ին հողվածով:  Սույն դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հողվա-	Առաջարկությունն ընդունվել է:	Ընդունվել է:

		<p>ծի պահանջներից:</p> <p>Նույն դիտողությունը վերաբերում է նաև «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի 2-րդ հոդվածներին:</p>		
<p>«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ</p>				
<p>7. ՀՀ կառավարություն</p>	<p>Նախագծի 3-րդ հոդված</p>	<p>Առաջարկում ենք «կետն» բառը փոխարինել «մասն» բառով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: Նույն դիտողությունը վերաբերում է նաև «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»</p>	<p>Առաջարկությունն ընդունվել է:</p>	<p>Ընդունվել է:</p>

		Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներին:		
«Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ				
8. ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Առաջարկում ենք «պաշտոնական հրապարակմանը հաջորդող» բառերը փոխարինել «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:	Առաջարկությունն ընդունվել է:	Ընդունվել է:
«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ				
9. ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք «56-րդ հոդվածը լրացնել 2.1-ին մասով» բառերը փոխարինել «56-րդ հոդվածի 2.1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.» բառերով, քանի որ հիշյալ օրենքի 56-րդ հոդվածով արդեն իսկ նախատեսված է 2.1-րդ մաս, բացի այդ հիշյալ մասով արդեն իսկ նախատեսված են նույնաբովանդակ դրույթներ, որոնք առկա են նաև նախագծով: Սույն դիտողությունը բխում է նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվա-	Առաջարկությունն ընդունվել է:	Ընդունվել է:

		<p>ծի 8-րդ մասի պահանջներից, մասնավորապես՝ Նորմատիվ իրավական ակտերում բացառվում են իրավական նորմերի անհիմն կրկնությունները և ներքին հակասությունները:</p>		
<p>«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Պետական նյութական պահուստի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծեր</p>				
<p>10. ՀՀ կառավարություն</p>	<p>Նախագծերի վերջին հոդվածները</p>	<p>Նկատի ունենալով այն հանգամանքը, որ նշված Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից որոշումների ընդունում, հիշյալ օրենքների նախագծերում նախատեսել անցումային դրույթներ՝ նախագծերը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով.</p> <p>«Հոդված _ . Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկու ամսվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններն ընդունում են սույն օրենքից բխող այն ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը, որոնց ընդունումը սույն օրենքով վերապահված է այդ մարմիններին:»:</p>	<p>Առաջարկությունն ընդունվել է:</p>	<p>Ընդունվել է:</p>